ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

ԿՈԴ
050.0051Ա. 27.04.18

27 ապրիլի 2018 թվականի թիվ 51 Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ և 31-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Որոշում է.

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի եզրակացությունը (կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրը:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
2018 թ. ապրիլի 27
Երևան

Արթուր Ջավադյան

ՀՀ կենտրոնական բանկի եզրակացությունը
«ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ[1]

2017 թվականին տնտեսական ակտիվության արագացումը պայմանավորված էր արդյունաբերության և ծառայությունների ճյուղերում աճի բարձր մակարդակների ձևավորմամբ և շինարարության ճյուղի աճի վերականգնմամբ: Գյուղատնտեսության ճյուղում գրանցվել է իրական ծավալների նվազում, որը նախորդ տարվա համեմատ ավելի ցածր է եղել:

Արդյունքում, 2017 թվականին գրանցվել է վերջին տարիների ամենաբարձր տնտեսական աճը՝ 7,5 տոկոս, որը զգալիորեն գերազանցել է ՀՀ պետական բյուջեի տարեկան ծրագրում նպատակադրված տնտեսական աճի 3,2 տոկոս մակարդակը: Ընդ որում, տնտեսական աճի բարձր մակարդակը ձևավորվել է տարվա առաջին եռամսյակից սկսած, այն դեպքում, երբ 2016 թվականն ամփոփվել էր ընդամենը 0,2% տնտեսական աճի ապահովմամբ: ՀՀ տնտեսության աճի արագացմանը նպաստել են թե արտաքին, և թե ներքին գործոնների բարենպաստ զարգացումները: Այսպես, արտաքին զարգացումներից կարևոր ազդեցություն են ունեցել գործընկեր երկրներում տնտեսական աճի 2017 թվականի արագացմամբ պայմանավորված եկամուտների աճը, արտաքին պահանջարկի և ՌԴ-ից դրամական փոխանցումների վերականգնումը, միջազգային շուկաներում մետաղների գների բարձր մակարդակի պահպանումը, զբոսաշրջության աճը: Ներքին գործոնների շարքում մեծ նպաստում են ունեցել ԿԲ կողմից շարունակական իրականացվող խթանող դրամավարկային քաղաքականությունը, տնտեսության վարկավորման աճը, արտահանման և ներդրումների խթանմանն ուղղված Կառավարության քաղաքականությունը:

Համախառն պահանջարկի վերականգնումը սպասվածից ավելի արագ է եղել, որն արտահայտվել է մասնավոր ծախսումների աճի բարձր ցուցանիշների ապահովմամբ՝ թե մասնավոր ներդրումների, և թե մասնավոր սպառման մասով: Համախառն պահանջարկի բարելավման նման զարգացումներին էական նպաստում է ունեցել ՀՀ կենտրոնական բանկի կողմից դեռևս 2015 թվականի վերջից սկսված և շարունակական բնույթ կրող դրամավարկային պայմանների թուլացումը, ինչը նպաստել է վարկավորման տոկոսադրույքի էական նվազմանը և տնտեսությանը տրամադրված վարկային ներդրումների աճին՝ ուղեկցվելով գնաճի ոչ բարձր մակարդակի պայմաններում եկամուտների գնողունակության պահպանմամբ:

---

[1] Սույն փաստաթղթում բերված թվային տվյալները վերցված են ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետությունից:

2017 թվականին տնտեսության ակտիվության բարձր մակարդակի պայմաններում, հարկաբյուջետային քաղաքականությունն ուղղորդվել է հարկաբյուջետային և պարտքի կայունության պահպանման նպատակի իրագործմամբ, որի պարագայում իրականացվել է զսպող հարկաբյուջետային քաղաքականություն:

2017 թվականին սպառման և ներդրումների աճի վերականգնման արդյունքում զուտ արտաքին պահանջարկի ազդեցությունը իրական ՀՆԱ-ի վրա բացասական է եղել՝ պայմանավորված ապրանքների և ծառայությունների իրական արտահանման համեմատ ապրանքների և ծառայությունների իրական ներմուծման առաջանցիկ աճով: Ընդ որում, արտահանման աճը պահպանվել է նախորդ տարվա երկնիշ մակարդակում: Ինչ վերաբերում է ներմուծմանը, ապա աճի բարձր մակարդակն ուղեկցվել է կառուցվածքային դրական փոփոխություններով, մասնավորապես ներմուծված ապրանքների կազմում աճել են ներդրումային ապրանքների իրական ծավալները: 2017 թվականին ընթացիկ հաշվի պակասուրդը նախորդ տարվա համեմատ խորացել է՝ ՀՆԱ-ի նկատմամբ կազմելով 3.5%՝ մոտենալով իր երկարաժամկետ հավասարակշիռ մակարդակին: Այսպիսով, տարվա ընթացքում տնտեսական աճի հիմնական շարժիչ ուժերը եղել են ծառայությունները և արդյունաբերությունը, իսկ ամբողջական պահանջարկի տեսանկյունից՝ մասնավոր սպառման և մասնավոր ներդրումների բարելավումը:

Պետական պարտքի կայունության ապահովմանն ուղղված հարկաբյուջետային քաղաքականության արդյունքում, 2017 թվականին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը նախորդ տարվա համեմատ նվազել է և կազմել 267.0 մլրդ դրամ: Նվազել է նաև ՀՆԱ-ում բյուջեի պակասուրդի տեսակարար կշիռը՝ նախորդ տարվա համեմատ 0.7 տոկոսային կետով, և կազմել ՀՆԱ-ի 4.8%-ը: Արդյունքում, ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը նախորդ տարվա նկատմամբ աճել է, որի պարագայում պարտքի կայունության ապահովման հետագա ընթացքը կախված կլինի պետական պակասուրդի հարկաբյուջետային կանոնի հետևողական պահպանումից, ինչպես նաև տնտեսական ակտիվության բարձր տեմպերի պահպանմանն ուղղված Կառավարության կողմից իրականացված ծրագրերի շարունակականության ապահովումից:

Անդրադառնալով գնաճին, նշենք, որ ներքին պահանջարկի վերականգնումն ուղեկցվել է 12-ամսյա գնաճի աստիճանական ավելացմամբ և տարեվերջին գնաճը գտնվել է նպատակային ցուցանիշի տատանումների թույլատրելի միջակայքում՝ կազմելով 2.6%: Տարվա ընթացքում, ընդհանուր առմամբ, պահպանված ցածր գնաճային միջավայրը նպաստել է շուկայական տոկոսադրույքների նվազմանը. տարվա ընթացքում նվազել են ինչպես պետական պարտատոմսերի եկամտաբերությունը, այնպես էլ վարկավորման տոկոսադրույքները:

ՀՀ տնտեսական ակտիվության բարձր մակարդակի պայմաններում, ՀՀ պետական բյուջեի եկամուտներն ու դրամաշնորհները նախորդ տարվա նկատմամբ

աճել են 5.7%-ով, իսկ հարկային եկամուտները՝ 7.3%-ով: Հարկերի նման աճի արդյունքում հարկերի և տուրքերի փաստացի մակարդակը գերազանցել է «ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով ծրագրավորված ցուցանիշը 21.3 մլրդ դրամով: Հարկերի և տուրքերի աճին դրականորեն են նպաստել թե ներքին տնտեսությունից հավաքագրված հարկերը, և թե ներմուծման բարձր մակարդակով պայմանավորված հարկերը: Հարկային եկամուտների և պետական տուրքերի աճը հիմնականում պայմանավորված է ավելացված արժեքի հարկի, ակցիզային հարկի, մաքսատուրքի, բնապահպանական և բնօգտագործման վճարների ու եկամտային հարկի գծով մուտքերի աճով: Միևնույն ժամանակ, տարվա ընթացքում շարունակվել են հարկերի հավաքագրման ոլորտի բարելավմանն ուղղված վարչարարական միջոցառումների իրականացումը, որի արդյունավետության մասին են վկայում՝ մասնավորապես բյուջե հավաքագրվող հարկատեսակներին վերաբերող գերավճարների նվազումը, և տնտեսվարողներին ավելացված արժեքի հարկի հետ վերադարձվող գումարների աճը:

ՀՆԱ սպասվածից բարձր մակարդակի ձևավորման պայմաններում 2017 թվականին պետական բյուջեի ընդհանուր եկամուտների, այդ թվում նաև հարկերի և տուրքերի մասնաբաժինը ՀՆԱ-ում նվազել է: Այսպես, 2017 թվականին ՀՀ պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են ՀՆԱ-ի 22.2%-ը՝ նախորդ տարվա 23.1%-ի դիմաց, իսկ հարկային եկամուտները՝ ՀՆԱ-ի 20.8%-ը, նախորդ տարվա 21.3%-ի դիմաց:

2017 թվականին ՀՀ պետական բյուջեի ծախսերն ավելացել են 6.3%-ով, որը տնտեսական աճի բարձր մակարդակի ձևավորման (ՀՆԱ-ի անվանական մեծության 9.8% աճ) պայմաններում հանգեցրել է ՀՆԱ-ի նկատմամբ ծախսերի հարաբերակցության նվազմանը այն կազմել է 26.7%՝ 2016 թվականի 27.6%-ի դիմաց[2]: Պետական բյուջեի ծախսերի տարեկան ծրագիրը կատարվել է 96.4%-ով: Հատկանշական է, որ 2016 թվականի համեմատ աճել է ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների ցուցանիշը՝ 41.9%-ով, որը հիմնականում պայմանավորված է մեքենաների և սարքավորումների ձեռքբերման, պահպանման և հիմնանորոգման ծախսերի աճով: Կապիտալ ծախսերի նման բարձր աճը հանգեցրել է ՀՆԱ-ում՝ տեսակարար կշռի աճի, որի արդյունքում 2017 թվականի կապիտալ ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 4.3%-ը՝ նախորդ տարվա 3.4%-ի դիմաց:

Այսպիսով, զսպող հարկաբյուջետային քաղաքականության պայմաններում, պետական բյուջեի պակասուրդը նախորդ տարվա նկատմամբ նվազել է 11 մլրդ դրամով, իսկ ՀՆԱ-ում՝ 0.7 տոկոսային կետով և կազմել ՀՆԱ-ի 4.8%-ը: Հատկանշական է, որ ՀՀ պետական բյուջեի պակասուրդի 88%-ն ուղղվել է պետական բյուջեի կապիտալ

---

[2] Ավելացված արժեքի հարկի վերադարձված գումարները հաշվի առած՝ պետական բյուջեի ծախսեր / ՀՆԱ ցուցանիշը կազմել է 27%՝ կանխատեսված 25.2%-ի դիմաց: 2017 թվականի ընթացքում, արտահանողներին ավելացված արժեքի հարկի հետ վերադարձված գումարները պետական բյուջեի ծախսերում, ինչպես որ նախատեսված էր, արտացոլվել է միայն առաջին եռամսյակում, իսկ երկրորդ եռամսյակից սկսած այն հիմնականում իրականացվել է եկամուտների նվազեցման եղանակով:

ծախսերի ֆինանսավորմանը: Պակասուրդի ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքում աճել է արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորման տեսակարար կշիռը և նվազել ներքին աղբյուրներինը[3]: Պակասուրդի ֆինանսավորման 73.6%-ը իրականացվել է արտաքին աղբյուրների միջոցների հաշվին, որի արդյունքում 2017 թվականին ՀՀ կառավարության արտաքին պարտք/ՀՆԱ ցուցանիշը աճել է 1.5 տոկոսային կետով և կազմել է 42.5%: Արդյունքում, ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 53.6%՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով 1.8 տոկոսային կետով:

Ինչ վերաբերում է բյուջեի պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրներին, ապա պարտատոմսերի հաշվին պակասուրդի ֆինանսավորումը կազմել է 45.7 մլրդ դրամ կամ պակասուրդի ֆինանսավորման աղբյուրների 17.1%-ը: 2017 թվականի ընթացքում ՀՀ պետական պարտատոմսերի շուկայում նկատվել է միջին կշռված եկամտաբերության նվազում (շուրջ 1.2 տոկոսային կետով): Ընդ որում, կարճաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը նվազել է շուրջ 1.2 տոկոսային կետով՝ կազմելով միջինը 6.5 տոկոս, միջնաժամկետ պարտատոմսերինը՝ 4.0 տոկոսային կետով՝ կազմելով միջինը 8.9 տոկոս, իսկ երկարաժամկետ պարտատոմսերինը նվազել է 2,5 տոկոսային կետով և կազմել միջինը 12.4 տոկոս: Հատկանշական է, որ պետական պարտատոմսերի տոկոսադրույքների նվազումն ուղեկցվել է պարտքի ժամկետայնության երկարացմամբ. 2017 թվականին շրջանառության մեջ եղած պետական պարտատոմսերի ժամկետայնությունը կազմել է 2787 օր 2016 թվականի՝ 2208 օրվա համեմատ:

Ամփոփելով նշենք, որ տնտեսական աճի բարձր տեմպերի վերականգնման և պարտքի կայունության պահպանմանն ուղղված 2017 թվականի հարկաբյուջետային քաղաքականության ծրագրերի իրականացման շարունակականության ապահովման պայմաններում հնարավոր կլինի նախապայմաններ ստեղծել տնտեսական աճի կայունացման համար: Միևնույն ժամանակ, ելնելով երկարաժամկետ հորիզոնում բարձր և կայուն տնտեսական աճի հիմքերի ապահովման առաջնահերթությունից՝ այսուհետ առավել կարևորվում է ներդրումների խթանման և կառուցվածքային բարեփոխումների իրականացման ուղղությամբ ՀՀ կառավարության ծրագրերի հետևողական և արդյունավետ իրականացումը:

---

[3] 2016 թվականին ՀՀ պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման ներքին և արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորվել էր պակասուրդի համապատասխանաբար 38.6 և 61.4 տոկոսը, իսկ 2017 թվականին նշված ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 26.4 և 73.6 տոկոս: